

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԶՈՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱՆ ԽՆԴԻՐԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ 1993-1994 ԹԹ.

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Սույն ուսումնասիրությունը վերաբերում է 1990-ական թթ. սկզբին Սիրիայում իշխող ալավիական վերնախավի սերնդափոխության գործընթացին: Այս խնդրին անդրադարձել են ռուսաստանցի և արևմտյան մի շարք հետազոտողներ՝ Է. Ջիսեռ, Ն. վան Դամ, Վ. Պեռտես, Ֆ. Լևեռետ, Վ. Ախմեդով, Պ. Յուրչենկո և այլք¹:

Երբ Հաֆեզ ալ-Ասադի առողջական վիճակը վատացավ 1990-ական թթ. սկզբին, նախագահը իր եղբայր Ռիֆաթի միջոցով փորձեց իշխանությունն առանց ցնցումների իր որդիներից մեկին փոխանցել: Հաֆեզի և Ռիֆաթի միջև ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ վերջինս խոստացել էր անցումային փուլում իշխանությունը ժամանակավորապես վերցնել իր ձեռքը, իսկ հետո փոխանցել Հաֆեզի որդուն: 1992 թ. այս պայմաններով էլ Ռիֆաթին թույլ տրվեց վերադառնալ Սիրիա և անցնել իր պարտականությունների կատարմանը: Սակայն Հաֆեզը ստիպված էր հաշվի առնել բանակի և հատուկ ծառայությունների բարձրաստիճան ուրոշ սպաների ուժեղ հակառիֆաթական տրամադրությունները և սահմանափակել եղբոր լիազորությունները²:

Սիրիայում քաղաքական և զինվորական իշխանությունները միաձուլվեցին, և վերջինները հսկայական ազդեցություն ունեին երկրի թե՛ ներքին, և թե՛ արտաքին քաղաքականության ձևավորման վրա: Առանց զինվորական, մանավանդ ալավիական վերնախավի համաձայնության երկրում քաղաքական հարցեր գրեթե չէին լուծվում: Այսպես, Սիրիայում իշխող «Բաաս» (Արաբական վերածննդի սոցիալիստական կուսակցություն)³ կուսակցությունը իշխանության է եկել հենց զինվորական հեղաշրջման միջոցով 1963 թ. մարտի

¹ Տե՛ս **Zisser E.** The Succession Struggle in Damascus, Middle East Quarterly, Vol. 2, Number 3, 1995, **Van Dam N.** The Struggle for Power in Syria, Politics and society under Asad and Ba'ath Party, I. B. Tauris Publishers, London-New York, 1996, **Volker P.** The Political Economy of Syria under Asad, London, 1995, **Leverett F.** Inheriting Syria, Bashar's Trial by Fire, Brookings Institution Press, Washington, 2005, **Ахмедов В. М.** Армия и политика в современной Сирии, армия и власть на Ближнем Востоке: от авторитаризма к демократии. Сборник статей. М., 2002, **Юрченко В. П.** Сирия: проблемы национальной безопасности. Военная политика и военное строительство в период правления ПАСВ (1963–2004 гг.). М., 2004:

² Տե՛ս **Ахмедов В. М.**, նշվ. աշխ., էջ 165:

³ 1946 թ. սիրիացի քրիստոնյա քաղաքական գործիչ Միշել Աֆլակը և Դամասկոսի դպրոցներից մեկի պատմության ուսուցիչ Սալահադին Բիթարը հիմնում են Արաբական վերածննդի կուսակցությունը, որը 1953 թ. միավորվեց Ակրան Հաուրանիի Արաբական սոցիալիստական կուսակցության հետ և միայն 1954 թ. վերանվանվեց Արաբական վերածննդի սոցիալիստական կուսակցության՝ հիզբ ալ-բաաս ալ-արաբի ալ-իշթիռաբի: Կուսակցության կարգախոսն է՝ «միասնություն (վահդա), ազատություն (հուռ-նիյա), սոցիալիզմ (իշթիռաբիյա)»:

8-ին⁴: 1971 թ. փետրվարին Յաֆեզ ալ-Ասադի իշխանության գալուց հետո Սիրիայում զինվորականության թիվը, պայմանավորված արտաքին և ներքին մի շարք նարտահրավերներով, հետզհետե ավելանում էր: 1970 թ. Սիրիայի զինված ուժերը հաշվվում էին շուրջ 80 հազար, իսկ 1990-ական թթ. սկզբին՝ արդեն 400-430 հազար⁵: Փաստորեն, որպեսզի Յաֆեզ ալ-Ասադը կարողանար հեշտությամբ լուծել իշխանության խաղաղ փոխանցման խնդիրը, պետք է հաշվի առներ զինվորական էլիտայի, անվտանգության և հետախուզական ծառայությունների՝ մուխաբառաթի տրամադրությունները, առանձին գործիչների դիրքորոշումները:

Այդ նպատակով 1993 թ. Յաֆեզ ալ-Ասադն աստիճանաբար ձեռնամուխ եղավ զինված ուժերի և պետանվտանգության համակարգի բարձրագույն ղեկավարության կազմի նորացմանը: Ռուս հետազոտող Վ. Ախմեդովն իր ուսումնասիրություններից մեկում նշում է. «Յետաքրքրական է այն, որ իրենց պաշտոններից զրկվում էին դեռևս 1980-ական թթ. առաջին կեսի ներքաղաքական ճգնաժամի ընթացքում հենց Յաֆեզ ալ-Ասադին աջակցություն ցուցաբերած զինվորական դեմքերը»⁶: Իսկապես, այս փաստը հետաքրքրական է այնքանով, որ այդ գործիչները 1980-ական թթ. առաջին կեսի ներքաղաքական ճգնաժամի ընթացքում հավատարմորեն ծառայել էին Յաֆեզ ալ-Ասադին, սակայն անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ արդեն 1990-ական թթ. սկզբին նախագահը ոչ մի երաշխիք չուներ, որ այդ գործիչները նույն նվիրվածությունը կցուցաբերեին իր որդիների նկատմամբ: Պետք է նշել, որ կադրային փոփոխությունները նպատակ ունեին նախ Բասիլ ալ-Ասադի, հետո արդեն Բաշար ալ-Ասադի նախագահ դառնալու համար ռազմաքաղաքական ամուր հիմք ստեղծել: Այս նպատակով, մասնավորապես, ալավի զինվորական վերնախավում սկսվեց բարձրաստիճան սպաների սերնդափոխության գործընթացը: Վստահելի և հավատարիմ ալավի զինվորականներին առաջ քաշելու ճանապարհով Յաֆեզը մեծացնում էր բարձրաստիճան սպայական անձնակազմի նվիրվածությունն Ասադների ընտանիքին ու նաև նախագահի ապագա թեկնածուին:

Հայտնի է, որ 1990-ական թթ. սկզբին սիրիական հասարակության մեծ մասն այն կարծիքին էր, որ նախագահ Յաֆեզ-ալ Ասադին հաջորդելու է նրա ավագ որդին՝ Բասիլ ալ-Ասադը: Թեպետև պաշտոնական մակարդակով այս հարցը չէր արծարծվում, սակայն Բասիլը հետզհետե դառնում էր նախագահի աջ ձեռքը: Բասիլին էր հանձնարարվում հատուկ նշանակության կարևոր խնդիրների լուծումը, օրինակ՝ մաքսանենգության և կաշառակերության դեմ պայքարը⁷: Որպես հանրապետական գվարդիայի⁸

⁴ Տե՛ս **Abu Jaber Kamal S.** The Arab Ba'th Socialist Party, History, Ideology and Organisation, Syracuse University Press, New York, 1966, էջ 122:

⁵ Տե՛ս **Volker P.** The Political Economy of Syria under Asad, London, 1995, էջ 147:

⁶ **Ахмедов В. М.**, նշվ. աշխ., էջ 166:

⁷ Այս ազդեցիկ լծակը հանձնվել էր Բասիլին, որպեսզի կարողանար վերահսկել Ռիֆաթի ֆինանսական հոսքերը և նպաստել դրանց կրճատմանը, քանի որ վերջինս զբաղված էր մաքսանենգ ճանապարհով ապրանքների ներկրմամբ և արտահանմամբ: Իսկ այդ բիզնեսը Ռիֆաթին ապահովում էր հսկայական ֆինանսական միջոցներ, ինչպես նաև որոշակի ազդեցություն երկրում, քանի որ այդ գործում ընդգրկված էին հազարավոր սիրիացիներ (տե՛ս «The Independent», 22. 10. 1992):

⁸ Տե՛ս **Մուստաֆա Տլաս**, Միռաթ Հայաթի, ալ-ակր ալ- ռաբի', Դիմաշկ, 2007, էջ 354:

ղեկավարության անդամ և նախագահի անվտանգության կորպուսի ղեկավար, Բասիլին էր վստահվել նաև հանրապետական գվարդիայի կազմում էլիտար մի զորախմբի հրամանատարությունը՝ թեև նա ընդամենը մայրի կոչում ուներ: Շնորհիվ խարիզմատիկ կերպարի՝ Բասիլը հատկապես երիտասարդության շրջանում ընկալվում էր որպես ազգային հերոս: Երիտասարդները նույնիսկ նմանակում էին նրա կեցվածքն ու հագուկապը: Սակայն Բասիլին նախագահ դարձնելու Յաֆեզ ալ-Ասադի ծրագրերը խափանվում են, որովհետև 1994 թ. հունվարի 21-ին 32-ամյա Բասիլը Դամասկոսի օդանավակայանի ճանապարհին ավտովթարի զոհ է դառնում⁹: Չնայած Յաֆեզ ալ-Ասադի որդիներից և ոչ մեկը չունենալու Բասիլի ընդունակություններն ու պատրաստվածությունը պետական գործերում, սակայն նրա հուղարկավորությունից հետո խոսակցություններ էին պատվում, որ վերջինիս դերն ստանձնելու է Բաշար ալ-Ասադը: Այդ ժամանակ նա գտնվում էր Լոնդոնում, որտեղ կատարելագործում էր իր գիտելիքները բժշկության (ակնաբուժության) բնագավառում: Բասիլի մահից հետո 1994 թ. հունվարին Բաշարն անմիջապես վերադարձավ Սիրիա¹⁰: Սկսվեց նրան նախագահ դարձնելու գործընթացը, որն իրականացվելու էր նախապատրաստական երեք փուլով: Առաջին փուլում Յաֆեզ ալ-Ասադին անհրաժեշտ էր ստանալ զինվորական և պետանվտանգության շրջանակների աջակցությունը, երկրորդ փուլում նախատեսվում էր հասարակության շրջանում ստեղծել Բաշարի՝ պետական գործչի կերպարը, իսկ երրորդ փուլում՝ Յաֆեզը ջանալու էր բժիշկ որդուն հաղորդակից դարձնել երկրի կառավարման գործերին և կոփել քաղաքական հարցերում¹¹:

Այսպիսով, Բասիլի մահից հետո Բաշարը միանգամից ծանրաբեռնվեց զինվորական և պետական տարբեր խնդիրներով: 1995 թ. հունվարին նա դարձավ հանրապետական գվարդիայի մայր, և հետզհետե սիրիական լրատվական միջոցները նրա քաղաքական ու զինվորական գործունեությունը սկսեցին լայնորեն լուսաբանել: Այսպես, Բաշարին էր հանձնարարված Դամասկոսում ընդունել լիբանանյան քաղաքական գործիչներին՝ նախարարներին, ընդդիմության ներկայացուցիչներին և այլն: 1995 թ. մայիսին նա այցելեց Լիբանան՝ նախ Բաաբդայում հանդիպելով նախագահ Էլյաս Ջաուրիին, հետո Լիբանանի խորհրդարանի նախագահ Նաբիհ Բերիին: Սիրիական պաշտոնյաները Բաշարի այցը Լիբանան համարում էին մասնավոր, որի ժամանակ նրան ուղեկցում էին Լիբանանում սիրիական զորքերի ալավի ղեկավարները՝ գլխավոր հրամանատար, գեներալ Իբրահիմ Սաֆին և անվտանգության համակարգի ղեկավար, գեներալ Ղազի Քանանը¹²: Բաշար ալ-Ասադը, հետզհետե հաղորդակցվելով Սիրիայի ներքին և արտաքին քաղաքական կյանքին, անուղղակիորեն մասնակցում էր երկրի ղեկավարմանը և պետական կառավարմանը: Սա խոսում էր այն մասին, որ Բաշարը պատրաստվում էր փոխարինելու հայր Ասադին, թեև հրապարակավ միշտ ժխտում էր այդ հանգամանքը:

⁹ Տե՛ս تشرين, 22.01.1994:

¹⁰ Տե՛ս الثورة, 19.02.1994:

¹¹ Տե՛ս Leverett F., նշվ. աշխ., էջ 61:

¹² Տե՛ս Van Dam N., նշվ. աշխ., էջ 131:

1995 թ. տված հարցազրույցներից մեկի ժամանակ թղթակցի այն հարցին, թե արդյո՞ք ինքն իրեն համարում է Սիրիայի նախագահի թեկնածու, 29-ամյա Բաշարը ասել է. «Նրանք, ովքեր խոսում են այդ մասին, անտեղյակ են Սիրիայի սահմանադրությանը, չգիտեն, որ սահմանադրությամբ թույլատրվում է նախագահի թեկնածություն առաջադրել միայն 40 տարեկանը լրացած Սիրիայի քաղաքացիներին»¹³: Ժխտական նման պատասխանից կարելի է եզրակացնել, որ իշխանության փոխանցման մեխանիզմը հորից որդուն շատ զգուշավոր և գաղտնի բնույթ էր կրում: Հաֆեզ ալ-Ասադն իր հերթին նույնպես ժխտում էր նման ճանապարհով նոր իշխանության ձևավորումը:

Հոլանդացի հետազոտող Նիկոլաոս վան Դամն իր «Իշխանության համար պայքարը Սիրիայում» աշխատության մեջ բերում է դեռևս 1992 թ. նոյեմբերի 12-ին Հաֆեզ ալ-Ասադի տված հարցազրույցից մի հատված, որտեղ այն հարցին, թե ո՞վ է հաջորդելու իրեն, Ասադը պատասխանել է. «Ես չունեմ ինձ հաջորդող: Հաջորդողին որոշելու են պետական և սահմանադրական կառույցները, ինչպես նաև կուսակցական մարմինները»¹⁴: Սա նշանակում էր, որ Հաֆեզ ալ-Ասադը չէր ցանկանում բացել իր խաղաքարտերը և դրանով ավելորդ ներքաղաքական լարվածություն առաջացնել, մանավանդ որ Սիրիան այդ ժամանակ մասնակցում էր 1991 թ. հոկտեմբերից սկսված Մադրիդի խաղաղության կոնֆերանսին, իսկ երկրի ներքին կայունությունը շատ կարևոր էր բանակցություններում ամուր դիրքերից հանդես գալու համար:

Կադրային փոփոխությունները զինվորական վերնախավում սկսվեցին 1993 թ., երբ պաշտոնից զրկվեց ալավի ազդեցիկ գեներալ, Սիրիայի զինվորական հակահետախուզական ծառայության ղեկավար Ալի Դուբան, որն այդ պաշտոնը զբաղեցնում էր 1974 թ.-ից: Ալի Դուբայի հետ միասին պաշտոնանկ արվեցին կամ այլ պաշտոնների նշանակվեցին 11 պետական բարձրաստիճան ծառայողներ, որոնք սերտ հարաբերությունների մեջ էին նրա հետ: Որոշ ժամանակ Ալի Դուբան Լաթաքիայում տնային կալանքի մեջ մնաց, սակայն հետագայում զբաղեցրեց զինված ուժերի (ԶՈՒ) գլխավոր շտաբի պետի երեք տեղակալներից մեկի պաշտոնը¹⁵: Հաֆեզն այդպիսով ցանկանում էր Դուբայի ազդեցության ոլորտը սահմանափակել, սակայն վերջինս, չնայած նշանակվել էր նոր պաշտոնի, բայց շարունակում էր վստահորեն ազդել զինվորական հակահետախուզական ծառայության գործունեության վրա: Ալի Դուբային, ինչպես նշում է Վ. Ախմեդովը, վերջնականորեն մեկուսացնելն անհնար էր, որովհետև որպես գաղտնի ծառայության նախկին ղեկավար նա տիրապետում էր հարյուրավոր քաղաքական բանտարկյալների, հակաիշխանական տարրերի վերաբերյալ շատ արժեքավոր տեղեկությունների¹⁶, իսկ այս հանգամանքը իշխանությունները չէին կարող հաշվի չառնել:

¹³ «ալ-Հայաթ», 30. 07.1995:

¹⁴ Van Dam N., նշվ. աշխ., էջ 132:

¹⁵ Տե՛ս Ахмедов В. М., նշվ. աշխ., էջ 166-167:

¹⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 178:

Հոլանդացի ուսումնասիրող Ն. վան Դամն իր աշխատության մեջ նշում է, որ Բաշարի թեկնածության ընտրությունը որպես հաջորդ նախագահի միանշանակորեն չընդունվեց սիրիական հասարակության կողմից, ավելին, ավափական վերնախավում սկսեցին կասկածամտորեն վերաբերվել այդ որոշմանը: Այդ պատճառով էլ 1994 թ. հուլիսին ձերբակալվեց ավափ գեներալ, հատուկ ուժերի¹⁷ հրամանատար Ալի Չայդարը¹⁸ և ենթարկվեց տնային կալանքի: Ալի Չայդարի ձերբակալության մյուս պատճառը նրա դիրքորոշումն էր Իսրայելի հետ սկսված բանակցությունների կապակցությամբ: Այսպես, Սիրիայի պաշտպանության նախարարության գլխավոր շտաբի պետ, գեներալ Հիքմեթ Շիհաբիի հետ ղեկավար սպաների հանդիպման ժամանակ, որտեղ քննարկվում էին Իսրայելի հետ խաղաղության համաձայնագրի կնքումից հետո տարածաշրջանի անվտանգության պահպանման հնարավոր տարբերակները, Չայդարը նշել է, թե իրենք՝ ավափները, որ ստեղծել են այս վարչակարգը, ցանկանում են անմիջական մասնակցություն ունենալ խաղաղության գործընթացին: Չնայած հանդիպմանը ներկա բոլոր սպաները գիտակցում էին ավափների դերի կարևորությունը վարչակարգի պահպանման գործում, սակայն միշտ անընդունելի է համարվել այդ փաստի մասին ոչ միայն բացեփաց խոսելը, նույնիսկ անուղղակիորեն ակնարկելը: Չայդարի այս ելույթն այդ ժամանակ ընկալվեց որպես նախագահ Չաֆեզ ալ-Ասադի կողմից Իսրայելի հետ խաղաղության բանակցությունների գնալու քաղաքական գծի անուղղակի քննադատություն¹⁹ և նրան, ինչպես արդեն վերը նշեցինք, ձերբակալեցին: Ալի Չայդարին փոխարինեց ավափ գեներալ Ալի Չաբիբը, որը հակաիրաքյան կռաւիցիոն ուժերի կազմում սիրիական զորքերի հրամանատարն էր²⁰: Ալի Չայդարի պաշտոնանկությունը սիրիական բարձրաստիճան սպայական վերնախավում որոշակի լարվածություն առաջացրեց: Դա է փաստում Է. Ջիսեռն իր վերոբերյալ հոդվածում՝ ընդգծելով. «Եթե Չայդարի նման նվիրված գործիչը զոհ գնաց ներքաղաքական փոփոխության այդ ալիքին, ապա մյուսներն իրականում մտածելու շատ բան ունեին, և գիշերները հանգիստ անցկացնելու խնդիր էր առաջանում»²¹: 1994 թ. ամռանը թոշակի ուղարկվեց նաև հանրապետական գվարդիայի հրամանատար Ադնան Մախլուֆը, որն ավափական համայնքի ամենաազդեցիկ ընտանիքներից էր սերում և Չաֆեզ ալ-Ասադի կնոջ՝ Անիսայի հորեղբորորդին էր: Ադնան Մախլուֆին փոխարինեց Բաշար ալ-Ասադի վստահելի գեներալներից մեկը՝ Ալի Չասանը:

1994 թ. սեպտեմբերին պաշտոնանկ արվեց ևս մեկ բարձրաստիճան սպա՝ գեներալ Մաջիդ Սաիդը, որը ղեկավարում էր ընդհանուր հետախու-

¹⁷ Տե՛ս **Մուստաֆա Տլաս**, նշվ. աշխ., էջ 351:

¹⁸ Ալի Չայդարը ծագում էր ազդեցիկ ավափական Չադդադին ցեղի Դիբ ընտանիքից: Ռազմական քուլեջն ավարտել էր Եգիպտոսում և հատուկ դասընթացներ էր անցել արտասահմանում: Նա մասնակցել էր 1982 թ. Համա քաղաքում «Մուսուլման եղբայրներ» ծայրահեղական կազմակերպության ապստամբության ճնշմանը, ինչպես նաև 1983-1984 թթ. Ռիֆաթի կողմից Չաֆեզի դեմ կազմակերպած դավադրության ձախողմանը: Նա բազմիցս ցույց էր տվել իր նվիրվածությունը Չաֆեզ ալ-Ասադին:

¹⁹ Տե՛ս **Volker P.** The Political Economy of Syria under Assad, London, 1995, էջ 153:

²⁰ Տե՛ս «ալ-Չայաթ», 03.09.1994:

²¹ **Zisser E.**, նշվ. աշխ., էջ 55:

գության վարչությունը: Այս կառույցը զբաղվում էր վարչակարգի անվտանգության ապահովմամբ, ինչպես նաև տնտեսական և քրեական հանցագործությունների դեմ պայքարով²²: Մաջիդ Սաիդին փոխարինեց Բաշիր ան-Նաջջարը, որը նախկինում զբաղեցնում էր Սիրիայի գլխավոր մաքսային ծառայության ղեկավարի պաշտոնը և համարվում էր Բասիլ ալ-Ասադի հիմնական աջակիցներից, քանզի մասնակցել էր թմրադեղերի մաքսանենգութան դեմ Բասիլի նախաձեռնած պայքարին²³: Մաջիդ Սաիդի պաշտոնանկության վարկածներից առաջինն այն էր, թե իբր լրացել էր նրա պաշտոնավարման տարիքային սահմանը, իսկ երկրորդը՝ իբր վերջինս եռանդուն չէր պայքարում մաքսանենգության և հանցագործությունների դեմ: Մաջիդ Սաիդն ու նրան փոխարինած Բաշիր ան-Նաջջարը սուլենի էին և չէին ներկայացնում ալավիական վերնախավը: Պետք է ենթադրել, որ այս կադրային փոփոխությունը ևս իշխանության հաջորդականության ապահովման գործընթացի կարևոր քայլերից էր, քանի որ Նաջջարի նշանակումը դիտվում էր որպես Բաշար ալ-Ասադի դիրքերի ամրապնդմանն ուղղված քայլ: Այս պնդումը հաստատում է նաև Է. Ջիսեռն իր ուսումնասիրությունում: Նա ընդգծում է. «Գուցե Յաֆեզ ալ-Ասադը, պաշտոնազրկելով Մաջիդին, ցույց տվեց, որ այդ պաշտոնը պետք է զբաղեցնի մի մարդ, որն անվերապահորեն նվիրված կլինի իր հետնորդին (իմա՝ Բաշար ալ-Ասադին - Գ. Վ.)»²⁴: Այս փոփոխությամբ Յաֆեզ ալ-Ասադը ցանկանում էր ցույց տալ, որ ամենակարևորը ոչ թե ալավիական համայնքի ներկայացուցիչ լինելու հանգամանքն է, այլ այն, թե որ գործիչն ինչ չափով է նվիրված վարչակարգին: Այնուամենայնիվ, ալավիական համայնքը ներկայացնող զինվորականները ծանրակշիռ դեր ունեին պետական վերնախավում, և դա ակնհայտ էր: Թեև ընդհանուր հետախուզության վարչության ղեկավարը փոխվեց, սակայն տեղակալի պաշտոնում շարունակեց մնալ ալալի Մուհամմադ Նասիֆը, որը համարվում էր կառույցի ամենաազդեցիկ դեմքը²⁵: Այսինքն՝ ստացվում էր, որ առերևույթ իշխանության ղեկին նշանակվում էր սուլենի մուսուլման, սակայն այդ իշխանությունն իրականացնող բոլոր դեպքերում մնում էր ալալի: Անդրադառնալով վերը նշված հիմնախնդրին՝ Վ. Ախմեդովը գրում է. «Գրեթե բոլոր բարձրաստիճան զինվորական և պետական պաշտոններ զբաղեցնող սուլենիների, քրիստոնյաների և դրուզների տեղակալներն ալալիական համայնքի ներկայացուցիչներից էին»²⁶:

Կադրային հաջորդ փոփոխությունը կատարվեց Սիրիայի ռազմաօդային ուժերի համակարգում: 1994 թ. սեպտեմբերին ալալի գեներալ Մուհամմադ Խուլիին նշանակվեց ռազմաօդային ուժերի հրամանատար՝ փոխարինելով գեներալ Ալի Մալահաֆջիին: Խուլիին մինչև 1987 թ. զբաղեցնում էր ռազմաօդային հետախուզական ծառայության ղեկավարի պաշտոնը, հետո նշանակվեց ռազմաօդային ուժերի հրամանատարի տեղակալ: Խուլիի նշանակումը ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կողմից կարող էր ըն-

²² Տե՛ս նույն տեղը, էջ 59:

²³ Տե՛ս **Ахмедов В. М.**, նշվ. աշխ., էջ 167:

²⁴ **Zisser E.**, նշվ. աշխ., էջ 55:

²⁵ Տե՛ս նույն տեղը:

²⁶ Տե՛ս **Ахмедов В. М.**, նշվ. աշխ., էջ 161:

²⁶ **Zisser E.**, նշվ. աշխ., էջ 55:

կալվել որպես անհաջող ընտրություն, քանի որ նրա անունը կապվում էր դեռևս 1986 թ. Լոնդոնի «Հիթոու» օդանավակայանում կատարված ահաբեկչական մի գործողության հետ²⁷: Փաստորեն Ասադը գիտակցում էր, որ Խուլիի նշանակումը կարող էր ավելորդ լարվածություն առաջացնել այդ երկրների և Սիրիայի հարաբերություններում, բայց, այնուամենայնիվ, գնաց այդ քայլին, չնայած այն հանգամանքին, որ այդ ժամանակ Սիրիան ձգտում էր բարելավել իր հարաբերությունները ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի հետ: Պետք է ենթադրել, որ Մուհամմադ Խուլիի նշանակումն այդ պաշտոնին Ասադի համար կարևոր նշանակություն ուներ, քանի որ նրան այդ ժամանակ երկրի ներսում անհրաժեշտ էին հավատարիմ պաշտոնյաներ, որոնք կպաշտպանեին վարչակարգի անվտանգությունը և հետագայում աջակցություն ցույց կտային Բաշարին նախագահ դարձնելու ծրագրի իրականացմանը:

Հաֆեզ ալ-Ասադը, բացի զինվորական բնագավառում կատարած կարգային փոփոխություններից ու տեղափոխություններից, դեռևս հունիս-հուլիս ամիսներին որոշ փոփոխություններ էր իրականացրել Սիրիայի կառավարության կազմում: Այսպես, թեև 1993 թ. սեպտեմբերի 12-ին Ասադի նախագահությամբ կայացած կառավարության նիստում որոշվել էր Սիրիայում էներգետիկայի բնագավառին հատկացնել շուրջ 1 մլրդ ամերիկյան դոլար²⁸, սակայն Սիրիայում էլեկտրականության ամենօրյա անջատումները դեռ շարունակվում էին: Դամասկոսում հովհարային անջատումները տևում էին մինչև 6 ժամ, որն էլ առաջացնում էր հասարակության դժգոհությունը: Այս հանգամանքը պատճառաբանելով՝ 1994 թ. հունիսի 1-ին նախագահ Ասադը պաշտոնազրկեց էներգետիկայի նախարար Քամիլ Բաբային, որի փոխարեն նշանակվեց Մունիր Ասադ Սաիմ ալ-Դահրին: Նույն թվականի հուլիսի 12-ին պաշտոնանկ արվեց նաև Դամասկոսի նահանգի կառավարիչ, «Բաաս» կուսակցության ամենակտիվ դեմքերից Վալիդ Համմամիյան, որին այդ պաշտոնում փոխարինեց Մուհամմադ Ջուհայր Սալահ ադ-Դին Թադլաբին: Համմամիյայի պաշտոնանկությունը կապված էր սոցիալական մի շարք պատճառների հետ: Շուրջ երեք միլիոն բնակչություն ունեցող Դամասկոսի նահանգում անմխիթար վիճակում էր ջրամատակարարման համակարգը, հետզհետե ավելանում էին անօթևան ընտանիքները²⁹: Վերջին երկու կարգային փոփոխությունները հասարակության սոցիալ-տնտեսական վիճակի կայունացմանն ու բարելավմանն ուղղված քայլեր էին: Այդ փոփոխությունները բխում էին վարչակարգի անվտանգության ապահովման և նախագահական իշխանության հաջորդականության խնդրի շահերից, քանի որ դրանք կատարվում էին մի ժամանակահատվածում, որը մտնում է մեր կողմից նշված կարգային փոփոխությունների ժամանակային սահմանների մեջ՝ 1993-1994 թթ.:

Այսպիսով, ովքե՞ր կարող էին այդ ժամանակահատվածում՝ 1993-1994 թթ. նախագահի հավանական թեկնածուներ համարվել և ովքե՞ր էին ապահովելու իշխանության փոխանցումը Հաֆեզ ալ-Ասադից Բաշար ալ-Ասադին:

²⁷ Տե՛ս Seale P. Asad. The Struggle for the Middle East, University of California, Berkeley, Los Angeles, 1989, էջ 475-482:

²⁸ Տե՛ս تشرين , 13.09.1993:

²⁹ Տե՛ս البعث , 01.10.1993:

Ըստ Է. Ջիսեռի՝ Չաֆեզ ալ-Ասադի հավանական հետևորդներից էր համարվում նրա եղբայր Ռիֆաթ ալ-Ասադը, որը 1995 թ. զբաղեցնում էր ազգային անվտանգության հարցերով փոխնախագահի պաշտոնը: Ռիֆաթ ալ-Ասադը ալավիական համայնքի ամենաազդեցիկ ներկայացուցիչներից էր, ամուր կապեր ուներ արաբական աշխարհի և Արևմուտքի հետ, որտեղ գտնում էին, որ Ռիֆաթը տնտեսության բնագավառում ավելի եռանդուն և գործունյա է, կարող է Սիրիան ինտեգրել համաշխարհային տնտեսությանը³⁰: Նախագահի հավանական թեկնածուների շարքում էին նաև սուննիական համայնքը ներկայացնող Աբդ ալ-Յալիմ Խադդամը և Սիրիայի ՁՈՒ գլխավոր շտաբի պետ Յիքմեթ Շիհաբին, որոնք Չաֆեզի հետ մտերիմ էին պատանեկան տարիներից: Աբդ ալ-Յալիմ Խադդամը, որը «Բաաս» կուսակցության գլխավոր գործիչներից էր, Չաֆեզի հետ հարաբերություններ ուներ սկսած 1950-ական թթ. սկզբից, երբ երկուսն էլ Սիրիայի ուսանողների ազգային միության անդամներ էին: Դեռևս 1967 թ. Խադդամը Կունեյտրայի շրջանի ղեկավարն էր: Երբ 1970 թ. նոյեմբերին Չաֆեզ ալ-Ասադը Սիրիայում իշխանության գլուխ անցավ, Խադդամը դարձավ արտաքին գործերի նախարար, իսկ 1984 թ. նշանակվեց արտաքին հարաբերությունների գծով Սիրիայի փոխնախագահ: Մինչև 1974 թ. Յիքմեթ Շիհաբին զինվորական անվտանգության ծառայության ղեկավարն էր, իսկ դրանից հետո նշանակվեց Սիրիայի ՁՈՒ գլխավոր շտաբի պետի պաշտոնին: Շիհաբին վերահսկում էր Իսրայելի հետ վարվող բանակցությունները, ինչը նշանակում էր, որ նա վայելում է նախագահ Չաֆեզ ալ-Ասադի մեծ վստահությունը³¹: Կիսելով Է. Ջիսեռի այն կարծիքը, որ վերոնշյալ երկու գործիչները Չաֆեզի սուննիական շրջապատի հավատարիմ գործիչներից էին, և ժխտելով այն պնդումը, որ Խադդամն ու Շիհաբին համարվում էին նախագահի հավանական թեկնածուներ՝ պետք է ասել, որ հեղինակը Խադդամի և Շիհաբի պարագայում հաշվի չի առնում չափազանց կարևոր մի հանգամանք. Չաֆեզ ալ-Ասադը ձգտում էր երկրում իշխանությունը պահել ալավիական համայնքի ձեռքում, որին արդեն շուրջ քառորդ դար հաջողվել էր ապահովել երկրի ներքին և արտաքին անվտանգությունը: Ալավիական վարչակարգն ապացուցել էր, որ կարողանում է պետական կառավարման բնագավառում դրսևորել իրեն և երկրի անվտանգությանը սպառնացող իրավիճակներում ճիշտ կողմնորոշվել: Այսինքն, Չաֆեզ ալ-Ասադի նպատակն իշխանությունը միայն հորից որդուն փոխանցելով չէր սահմանափակվում, այլև նա ցանկանում էր, որ իրենից հետո Սիրիայում պահպանվի կառավարման այն մշակույթը, որի կրողը ալավիական վերնախավն էր, և որ երկիրը կրկին հետադարձ քայլ չկատարի դեպի ռազմական հեղաշրջումներ:

Իշխանության հաջորդականության խնդրի լուծման գործում իրենց կարևոր և առանձնահատուկ դերն ունեին ալավիական համայնքը ներկայացնող Սիրիայի զինվորական վերնախավի մի շարք անդամներ: Բացի Իբրահիմ Սաֆիից, Շաֆիկ Ֆայադից, Մուհամմադ Խուլիից, Ալի Դուբայից և Ալի Չաբիբից, կարևոր նշանակություն ունեին նաև Սիրիայի ՁՈՒ գլխա-

³⁰ Տե՛ս «The Independent», 22.10.1992:

³¹ Տե՛ս Zisser E., նշվ. աշխ., էջ 58:

վոր շտաբի պետի հատուկ գործողությունների իրականացման գծով տեղակալ Ալի Ասլանը, հանրապետական գվարդիայի հրամանատար Ալի Յասանը, ռազմաօդային հետախուզական ծառայության ղեկավար Իբրահիմ Յուվաջին և քաղաքական անվտանգության ծառայության ղեկավար Ադնան Բադր Յասանը: Թվարկված ալավի սպաների մի մասը սերուն էր Յաֆեզ ալ-Ասադի տոհմից՝ Կալբիյա, իսկ մի մասն էլ՝ իր կամ կնոջ ընտանիքից՝ Մախլուֆ:

1993-1994 թթ. ընթացքում Սիրիայում իշխանության հաջորդականության ապահովման տրամաբանության շրջանակներում իրականացված կադրային փոփոխությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս ինչ-որ չափով ուրվագծել այդ ժամանակաշրջանում երկրում տիրող ներքաղաքական իրավիճակը:

Այսպես, չնայած Յաֆեզ ալ-Ասադը 1992 թ. արդեն չորրորդ անգամ յոթամյա ժամկետով ընտրվել էր Սիրիայի նախագահ, սակայն ընտրվելուց մեկ տարի անց սկսեց նպատակասլաց աշխատանք տանել երկրում բարձրագույն իշխանությունը իր ավագ որդուն՝ Բասիլ ալ-Ասադին փոխանցելու ուղղությամբ: Վերջինիս մահից հետո երկրում անորոշ իրավիճակ ստեղծվեց, և բոլորը լարված սպասում էին, թե Բասիլից հետո զավակներից ով է լինելու Յաֆեզին արժանի փոխարինողը: Նախագահ Յաֆեզը սկսեց առաջ քաշել իր մյուս որդուն՝ Բաշար ալ-Ասադին: Վերջինիս թեկնածության թեկուզև անուղղակի արժարժումը նախագահի համար քաղաքական հաշվարկներ կատարելու յուրահատուկ ինդիկատորի դեր խաղաց: Այսինքն, որպեսզի ապահովվեր իշխանության անցումը որդուն՝ Բաշարին, անհրաժեշտ էր շոշափել զինվորականների տրամադրություններն այդ հարցում: Քանի որ առանձին բարձրաստիճան զինվորականներ և գործիչներ կասկածամտորեն վերաբերվեցին այդ հարցին, ուստի նման գործիչներն էլ աստիճանաբար պաշտոնանկ արվեցին: Ալավի բարձրաստիճան զինվորականների պաշտոնանկությամբ սկսվեց սերնդափոխության մի գործընթաց, որը հիմնականում ուղղված էր Բաշար ալ-Ասադի դիրքերի ամրապնդմանը Սիրիայի զինվորական շրջանակներում, ապա նաև քաղաքական բեմահարթակում: Թեև սիրիական վերնախավում կադրային փոփոխությունները 1994 թ-ից հետո էլ շարունակվեցին, սակայն դրանք արդեն իրականացվեցին հիմնականում հակակոռուպցիոն գործողությունների պատրվակի ներքո:

ГРИГОР ВАРДАНЯН – *Вопрос о подготовке к передаче власти в Сирии в 1993–1994 гг.* – В 1992 г. Хафез аль-Асад в четвертый раз был избран президентом Сирии, а уже спустя год инициировал кампанию, которая преследовала цель избрание следующим президентом его старшего сына Басила. Но Басил умер, и в стране сложилась неопределенная ситуация. Президент начал осторожно продвигать к власти своего младшего сына Башара, чья кандидатура стала своеобразным индикатором в политических расчётах. Чтобы реализовать свои замыслы, президент должен был учитывать настроения военной верхушки. К тому же некоторые высокопоставленные чиновники скептически смотрели на Башара; позднее все они лишились занимаемых должностей. Важным элементом передачи президент-

ского поста от отца к сыну послужил политический процесс в военной элите алавитов, призванный укрепить позиции Башара аль-Асада в экономической и оборонной сфере.

GRIGOR VARDANYAN – *The Problem of the Preparation of Power Succession in Syria in 1993-1994.* – In spite of the fact that in 1992 Hafez al-Asad was elected president of Syria for the fourth time, only a year after his election he began a unique campaign as a result of which his junior son Basil al-Asad would become the next president of Syria. But after Basil al-Asad's unexpected death, the situation in the country became unstable and people began to think who was going to be the next candidate as far as the continuity of power in Syria was concerned. President Asad thought of his second son Bashar al-Asad as presidential nominee. Touching upon the candidacy of Bashar al-Asad, even indirectly, was used as a unique indicator for making political calculations. For ensuring the implementation of the power succession process, it was necessary to be informed about the positions of high-ranking military men beforehand. Some public officers treated Bashar al-Asad's candidacy for the post of the president with mistrust and were dismissed as a result. Particularly, there began a political process in the military elite of the Alawites, the purpose of which was the strengthening of the position of Bashar al-Asad in the economic and military sphere of the country.